«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի «ը)» ենթակետը՝ «քաղաքաշինական փաստաթղթերը» բառերից հետո, լրացնել «(, այդ թվում՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կիրարկման մեջ դրված՝ Կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան մշակված բազմակի օգտագործման օրինակելի (ճարտարապետաշինարարական) նախագծերը:»

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի «Կառուցապատողներն իրավունք ունեն» պարբերությունը լրացնել նոր՝ «է» ենթակետով, հետևյալ բովանդակությամբ՝ «կիրառել բնակելի, հասարակական, արտադրական նշանակության օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծեր, որոնք հիմք են հանդիսանում շինարարական ծրագրերի մեկնարկի և դրանց ֆինանսավորման (անկախ ֆինանսավորման աղբյուրից) համար, եթե այդպիսի պայման նախատեսված է շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների կապալի պայմանագրերով:

Ընդ որում՝

պետական բյուջեների միջոցների հաշվին նմանատիպ նախագծերով իրականացվող շինարարական ծրագրերի (աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների) ֆինանսական հատկացումների չափը՝ մինչև նախագծերի տեղակապման (տեղայնացման) սահմանված կարգով ամբողջական ավարտը, կարող է հաշվարկվել քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի կողմից հաստատված գնագոյացման համակարգի նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգերին ու խոշորացված ցուցանիշներին համապատասխան:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի «Կառուցապատողները պարտավոր են» պարբերության «ա» ենթակետը՝ «շինարարության թույլտվության հիման վրա»

բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի «Կառուցապատողներն իրավունք ունեն» պարբերության «է» ենթակետով նախատեսված դեպքերի»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: